

Խշխշան պալար (Էմկար)

Հիվանդության բնորոշումը. Խշխշան պալարը սուր ընթացքով ինֆեկցիոն հիվանդություն է, որն արտահայտվում է տենդով և մարմնի առանձին մասերում խշխշացող այտուցների առաջացումով:

Հարուցիչը բազմաձև, խիստ անաերոբ, սպոր առաջացնող ցուպիկ է: Այն մեծ տարածում ունի բնության մեջ, հատկապես հողում, ջրում, գոմաղբում, իսկ առողջ խոշոր եղջերավոր անասունները, ոչխարները, ձիերը և այլ կենդանիները արտաքին միջավայր են արտազատում կղկղանքի միջոցով: Այսինքն՝ առողջ կենդանիների աղիքների մեջ առկա է խշխշան պալարի հարուցիչը: Երբ այս մանրէն կղկղանքի միջոցով դուրս է գալիս արտաքին միջավայր, այն դառնում է վիրուլենտ (վարակիչ):

Արտաքին միջավայրի անբարենպաստ պայմաններում մանրէի սպորավորված ձևը օժտված է բարձր կայունությամբ: Իր կենսունակությունը և վարակունակությունը հողում կարող է պահպանվել 10 և ավելի տարիներ: Եռացմանը դիմանում է 2 ժամ:

Հաճախ հիվանդանում են 3 ամսականից մինչև 4 տարեկան խոշոր եղջերավոր անասունները, իսկ հազվագույտ դեպքերում՝ ոչխարները, այծերը: Մինչև 3 ամսական հորթերի անընկալունակությունը կապված է վակցինացված մայրերից խիժի և կաթի միջոցով ստացված հակամարմինների հետ, իսկ 4 տարեկանից բարձրներինը՝ բնական պայմաններում իմունացնող ենթավարակի հետ (մի քանի անգամ վակցինացումից հետո կենդանին ձեռք է բերում իմունիտետ հիվանդության նկատմամբ):

Հիվանդության տարածման ուղիները. Հիվանդության հարուցիչ աղբյուրը հիվանդ կենդանին է, նաև սատկածների դիակները:

Վարակման հիմնական ուղիներն են.

- ներքին ճանապարհը (կերի կամ ջրի միջոցով),
- ամբողջականությունը խախտված մաշկը (վերքերի դեպքում):

Կենդանիները հիվանդանում են հատուկենտ ձևով, վարակվում է գլխաքանակի 20-30%-ը: Հիվանդությունը մեծ ուժգնությամբ դրսևորվում է ամռան-աշնան ամիսներին: Հիվանդության դեպքում անկումները հասնում են մինչև 100%:

Կլինիկական նշանները. Հիվանդության գաղտնի շրջանը տևում է 1-5 օր:

Կլինիկական նշաններն են.

- Առաջին նշանը որևէ վերջավորության կաղությունն է:
- Այնուհետև մկաններով հարուստ մեկ կամ մի քանի հատվածներում գոյանում են սահմանափակ, տաք և ցավազգաց այտուցներ: Հաճախ այդպիսի ախտահարումներ առաջանում են ազդրի, գավակի, պարանոցի, գոտկի (մեջքի), կրծքի, թիակների և մկաններով հարուստ այլ հատվածներում:
- Մարմնի ջերմաստիճանը բարձրանում է մինչև 41-42°C:
- Կենդանին խիստ ընկճվում է, հազիվ է տեղից վեր կենում, որոճը դադարում է:

Ուշադրություն. Կենդանու մոտ հիվանդության կասկածի դեպքում անհապաղ հայտնեք անասնաբույժին:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները. ՀՀ-ում խշխշան պալարի վակցինացումը կատարվում է պետպատվերի շրջանակներում:

Հիվանդության տարածումը կանխարգելելու համար չոր և երաշտ տարիներին անհրաժեշտ է պարբերաբար գննել կենդանիների վերջույթները: Վերքեր, տրավմաներ, ճաքեր հայտնաբերելու դեպքում, դրանք ախտահանել ուժեղ ախտահանող լուծույթներով: Շաբաթը մեկ անգամ ամբողջ անասնազվաքանակը մեկ-երկու ժամ պահել խոնավ արոտավայրում կամ՝ հոսող ջրերի, գետակների, առվակների մոտ: Խշխշան պալար հիվանդության հայտնաբերման դեպքում ֆերմերը պետք է ձեռնարկի քայլեր՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով (տես աղյուսակ 3 և 4):

Արգելվում է

- հիվանդ կենդանիների սպանող մսի օգտագործման համար,
- նրանցից ստացված կաթի օգտագործումը սննդի մեջ,
- ինչպես նաև դիակներից կաշվի հանելը:

Կենդանիների դիակները, վարակված անասնակերի մնացորդները, ցամքարը և գոմաղբը այրում են կամ դիակները գցում են բեկարի հոր:

Բուժումը. Քանի որ հիվանդությունն ընթանում է սուր ընթացքով (նշանները հայտնաբերելուց հետո կենդանին կարող է սատկել մի քանի ժամվա ընթացքում), ուստի միշտ չէ, որ բուժումը արդյունավետ է:

Բուժումը արդյունավետ կարող է լինել, եթե ժամանակին դիմեք անասնաբույժին:

ՄԻ ՓՈՐՁԵՔ ԲՈՒԺՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՌԱՆՑ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺԻ:

Հիվանդացած և առողջացած կենդանիները ձեռք են բերում տևական իմունիտետ: Բուժման համար լավ է օգտագործել ժամանակակից անտիբիոտիկներ: Քանի որ գործ ունենք անաերոբ հարուցիչ հետ, ուրեմն լավ է ներարկել նիտոքս՝ 1մլ-ն 10 կգ կենդանի քաշին, լիմօքսին՝ 1մլ-ն 10 կգ կենդանի քաշին կամ օքսիտետրացիկլին՝ նույն դոզայով: Պրակտիկայում բուժում են նաև մարգանցովկայի 0.1%-ոց լուծույթով՝ ախտահարված մասի շուրջը ներարկում են մարգանցովկա, որից հետո կատարում են հակաբիոտիկային բուժում: